

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԻ ԱՂՕԹՔ

Ամենագրթած Փրկիչ, գիտեմ ես քեզի դեմ մեղանչեցի, քու սուրբ օրենքներուդ հակառակ գործելով: Իմ մեղքերովս, քեզմէ աւելի բարձր դասեցի արարածները եւ հաճոյքներս: Թէեւ պատիժի արժանի եմ, սակայն բարերար Յիսուս, տուր շնորհքը ճանչնալու յանցնաքներս, անոնց վրայ զղջալու, անկեղծօրէն զանոնք խոստովանելու եւ թողութեան արժանի ըլլալու: Ամէն:

ԶՂՋՈՒՄԻ ԱՂՕԹՔ

Աստուած իմ, ամենաբարի ըլլալուդ եւ ամէն բանէ աւելի քեզ սիրելուս համար, բոլոր սրտովս կը ցաւիմ ու կը զղջամ բոլոր գործած յանցանքներուս եւ մեղքերուս, հոգով, մտգով, խօսքով եւ գործով ըլլայ գիտակցաբար կամ անգիտակցաբար, կամայ թէ ակամայ: Եւ կ'առաջադրեմ այլեւս չմեղանչել, եւ մեղքի բոլոր առիթներէն փախչիլ քու սուրբ շնորհքովդ: Ամէն